Պրոֆեսիոնալ մոտեցում թրեյդինգին

Շաբաթական Զեկույց

12 նոյեմբերի 2012

Հասկանալ ֆինանսական շուկաները,
տեղեկատվությունը և վերլուծությունները գիտակցված ներդրումների համար

Ձեզ ենք ներկայացնում TeleTRADE Հայաստանի շաբաթական զեկույցների շարքի առաջին հրապարակումը՝ առաջարկելով միջազգային շուկայական միտումների և ֆինանսական ու տնտեսական զարգացումների բազմակողմանի վերլուծություն՝ կենտրոնանալով Հայաստանի վրա, բայց նաև անդրադառնալով համաշխարհային շուկայական միտումներին և զարգացումներին ԱՄՆ-ում, Եվրոպայում և Ասիայում:

Ձեր ուշադրությանը ներկայացնում ենք՝

- ԱՄՆ-ի նախագահական ընտրություններից հետո շուկան չի կորցնում տանանողականությունը, և ֆիսկալ ճգնաժամը սպառնում է ներքաշել տնտեսությունը ռեցեսիայի մեջ: Ի հեռուկս բարելավման նշաններին, երբ առևտրային դեֆիցիտը նվազում է, և արտահանումը ավելանում՝ Եվրոպական պարտքային ճգնաժամը և զարգացող շուկաների դանդաղ աճը թուլացնում են ամերիկյան շուկան:

- Եվրոպայում եվրոն չափավոր աճ ցուցադրեց՝ ի հեռուկս այն ճգնաժամին, որը տիրում է Հունաստանում՝ կապված վերջինիս տնտեսության փրկության համար նախատեսված 31,5 միլիարդ եվրոյի (40,1 միլիարդ դոլար) տրամադրման հետ: Եվրոպական կենտրոնական բանկը վատացրել է տնտեսական հեռանկարի կանխատեսումները և կարող է գործի դնել պարտատոմսերի գնման ծրագիրը:

- Ասիա. լարվածություն Չինաստանի և Միացյալ Նահանգների միջև՝ կապված ԱՄՆ-ի առևտրային ճեղքի և անազնիվ առևտրային միջոցների ու չինական արժույթի թերաժեքության վերաբերյալ ամերիկյան քննադատության հետ: Չինաստանը և Ճապոնիան կանգնած են արտահանման խնդրի հանգուցալուծման առջև: Չինական ՀՆԱ-ն գրանցեց ամենացածր աճը՝ սկսած 2009 թ.՝ վտանգվելով ներքին գերներդրումներից, վարկային չարաշահումներից և թույլ արտահանումներից:

- Համաշխարհային ապրանքային շուկաների տեմպերը դանդաղել են՝ կապված տնտեսական թուլության հետ, սակայն ոսկու գները կայուն աճ են գրանցում, քանզի Իրանը սկսել է ամսական ձեռք բերել 2 միլիարդ դոլարին համարժեք ոսկի:

- Հայաստան. նոր հնարավորություն ստեղծվեց այն բանից հետո, երբ Իրանը արգելեց սպառողական ապրանքների ներմուծումը: Իտալական ավիափոխադրողը մտնում է քաղաքացիական ավիացիայի հատված, սակայն քիչ եկամտաբերությունը՝ կապված Հայաստանի օդանավակայանի կողմից տրամադրվող ծառայությունների թանկ գների հետ, սահմանափակում է հնարավորությունները, և հայաստանյան Արմավիա ավիափոխադրողը կանգնած է սնանկության շեմին:

ԱՄՆ-ի շուկաները: Տատանողականություն և դրամային ճնշում

Թեպետ ԱՄՆ-ի նախագահական ընտրությունները առաջին հայացքից հանգստացրին շուկաները, սակայն ***տատանողականության որոշ չափաբաժին*** շարունակում է մնալ: Մասնավորապես, ընտրությունները, որոնք ավարտվեցին նախագահ Օբամայի հաղթանակով, հանգեցրին կառավարության բաժանման, քանզի հանրապետականները վերահսկում են ներկայացուցիչների պալատը, իսկ դեմոկրատները պահպանեցին մեծամասնությունը սենատում: Շատ ներդրողների համար ընտրությունները չհանգստացրին շուկաները ԱՄՆ-ի ֆիսկալ իրավիճակի ահագնացող հանգուցալուծման հետ կապված անհանգստության պատճառով: Այս անհանգստությունը իր գագաթնակետին կհասնի 2013 թ. հունվարի 1-ին, երբ անհրաժեշտ կլինի հարկերի բարձրացման միջոցով հասնել 607 միլիարդ դոլարի ներդրման և 1,5 տրիլիոն դոլարի չափով դաշնային ծախսերի կրճատման:

Նոյեմբերի 8-ին Կոնգրեսի Բյուջետային անկախ գրասենյակը (CBO) զգուշացրեց իրական վտանգի մասին, որ ***ԱՄՆ-ի տնտեսությունը կարող է «նորից գահավիժել»***՝ ավացնելով, որ ազդեցությունը կարող է պատճառ դառնալ ԱՄՆ-ի տնտեսության 0,5 տոկոս անկման համար, եթե Կոնգրեսը միջոցներ չձեռնարկի: Սակայն եթե Կոնգրեսը կասեցնի 1,2 տրիլիոն դոլարի հասնող մեքենայական ծախսերի կրճատումը և ընդլայնի այսպես կոչված Բուշի հարկային կրճատումը, ապա գալիք տասնամյակի ընթացքում տարեկան դեֆիցիտը կկազմի ՀՆԱ-ի համարյա 5 տոկոսը և պետական պարտքը 2022 թ. կավելանա մինչև ՀՆԱ-ի 90 տոկոսի չափով:

Միևնույն ժամանակ ի հայտ եկան ***ԱՄՆ-ի տնտեսության ամրապնդման որոշ հուսադրող նշաններ***, քանզի ԱՄՆ-ի առևտրային դեֆիցիտը նվազեց մինչև անցած 2 տարիների ամենացածր մակարդակը, և արտահանումները բարձրացան մինչև ռեկորդային մակարդակներ: Համաձայն նոյեմբերի 8-ին ԱՄՆ-ի Առևտրի նախարարության հրապարակած տվյալների՝ դեֆիցիտը սեպտեմբերին կրճատվեց մինչև 41,5 միլիարդ դոլար, և արտահանումները աճեցին 3,1 տոկոսով՝ մինչև բոլոր ժամանակների առավելագույն 187 միլիարդ դոլար մակարդակը: ***Աճը արտահանման մեջ*** վերջ դրեց երկամսյա անկմանը և կապված էր ***կոմերցիոն ինքնաթիռների , ծանր տեխնիկայի և ֆերմերային ապրանքների ավելի ուժեղ վաճառքի հետ:*** Ներմուծումը ԱՄՆ-ում աճեց 1,5 տոկոսով՝ մինչև 228 միլիարդ դոլար ***սպառողական ապրանքների, այդ թվում նաև նոր Apple iPhone 5-ի մասերի բեռնափոխադրումների***, ինչպես նաև նավթային բարձր գների հաշվին: ԱՄՆ-ի արտահանման ծավալների աճի համար ժամանակավոր խթան էր նաև ամառային երաշտի պատճառով սոյայի արտահանման 32 տոկոսանոց աճը:

Ընդհանուր առմամբ, ի հեռուկս արտահանման մեջ կտրուկ աճին՝ այն ամենայն հավանականությամբ չի առաջնորդի տնտեսական աճը, ***քանզի եվրոպական պարտքային ճգնաժամը և զարգացող շուկաներում համաշխարհային դանդաղ աճը շարունակում են թուլացնել ամերիկյան ապրանքների պահանջարկը***: 2012 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին դեպի ԵՄ ամերիկյան արտահանման ծավալները մնացին անփոփոխ, արտահանումները դեպի Լատինական Ամերիկա ավելացան 4,2 տոկոսով, սակայն դեպի այդ տարածաշրջանի խոշորագույն տնտեսությունը համարվող Բրազիլիա՝ նվազեցին: 2012 թ-ին Միացյալ Նահանգների դեֆիցիտը կազմում է տարեկան 554 միլիարդ դոլար՝ մի փոքր ավելի քիչ, քան 2011 թ-ի 559 միլիարդ դոլար մակարդակը: Չինաստանի հետ ԱՄՆ-ի դեֆիցիտը սեպտեմբերին աճեց մինչև 29,1 միլիարդ՝ 6,8 տոկոսով ավելի, քան անցած տարի:

Զարգացումները Եվրոպայում՝

Այս շրջանում ***եվրոն չափավոր եկամուտ ցուցադրեց՝*** ի հեռուկս հունական խորհրդարանում մոտեցող քվեարկությանը՝ կապված արտակարգ միջոցների կիրառման հետ: Եվրոն հաղթահարեց երեքշաբաթյա նվազագույն շեմը ճապոնական իենի համեմատ՝ հասնելով 102,87 մակարդակին: Վերջինս երկամսյա մինիմումներից հետո աճ գրանցեց նաև ԱՄՆ դոլարի համեմատ՝ վաճառվելով 1,2818 մակարդակի վրա:

Եվրոպական շուկաներում հիմնական անհանգստությունը կապված էր հունական խորհրդարանի քվեարկության հետ, որը կորոշեր տնտեսության փրկության նոր ֆինանսավորման համար անհրաժեշտ արտակարգ միջոցների հարցը: Եթե քվեարկությունը չափազանց մեծ դժգոհություն առաջացնող արտակարգ միջոցների հարցի շուրջ տապալվի, այն պատճառ կհանդիսանա հունական տնտեսության էլ ավելի մեծ անկման համար՝ ներդրողներին մղելով դեպի ավելի ապահով ակտիվներ և, հետևաբար, թուլացնելով եվրոն: Եվրոզոնային ֆինանսների նախարարները մինչև նոյեմբերի վերջ չեն որոշի գումարներ տրամադրել Հունաստանին, քանզի նրանք սպասում են տնտեսության փրկության պայմաններին երկրի համաձայնությունը հաստատող զեկույցին: Հունաստանին տնտեսության փրկության համար օգնություն տրամադրվող 31,5 միլիարդ եվրոն (40,1 միլիարդ դոլար), որը սառեցվել էր հունիսին, ևս մեկ անգամ նոյեմբերի 12-ին կքննարկվի Բրյուսելում:

Ավելի լայն եվրոպական կոնտեքստում Եվրոպական Կենտրոնական Բանկը՝ ԵԿԲ-ն, մտահոգված է, ***որ տնտեսական հեռանկարը վատթարանում է***, և հակված է հիմնական տոկոսադրույքը թողնել անփոփոխ, որը այժմ կազմում է 0,75 տոկոս: Կանխատեսվում է, որ 2012 թ-ին գնաճը Եվրոպայում կմնա 2 տոկոսից ավելի 2013 թ-ի նվազումից առաջ: ԵԿԲ-ն պատրաստ է գործի դնել պարտատոմսերի գնման իր ծրագիրը, եթե եվրոպական կառավարությունները համաձայնվեն պայմաններին: Արժույթի միջազգային հիմնադրամը ևս խորհուրդ է տվել եվրոզոնայի այն անդամներին, որոնք կանգնած են պարտքային բարձր տեմպերի առաջ, որպեսզի վերջիններս դիմեն ֆինանսական օգնության համար, ինչը գործի կդնի ԵԿԲ-ի պարտատոմսերի գնման ծրագիրը: Այս ճնշումը վերաբերում է հատկապես Իսպանիային, որը չի ցանկանում միջոցներ ձեռնարկել:

Հայացք Ասիային՝

Ինչպես միշտ, Ասիայում զարգացումների հիմնական ուշադրությունը կենտրոնանում է Չինաստանի վրա: ***Լայնացող առևտրային ճեղքվածքը ԱՄՆ-ի և Չինաստանի միջև առիթ է դարձել երկու երկրների միջև առևտրային լարվածության համար,*** և այդ լարվածությունը ամենայն հավանականությամբ կշարունակվի նաև Օբամայի նախագահության երկրորդ շրջանում: ԱՄՆ-ը պնդում է, որ Չինաստանի առևտրային միջոցները անազնիվ են և որ Չինաստանը իր յուանի փոխարժեքը ԱՄՆ դոլարի համեմատ արհեստականորեն ցածր է պահում (ցածր յուանը չինական ապրանքները ամերիկյան հաճախորդների համար էժան է դարձնում, իսկ ամերիկյան ապրանքները ավելի են թանկանում Չինաստանում): Թեպետ Օբամայի աշխատակազմը ստիպված կլինի ավելի արագ շարժվել յուանի արժեվորման ուղղությամբ, ԱՄՆ-ը չի ավելացնի լարվածությունը՝ Չինաստանին կոչելով արժույթի մանիպուլյատոր, ինչը բանակցություններ կպահանջի Համաշխարհային առևտրային կազմակերպությունում(WTO):

Չինաստանը և Ճապոնիան իրենց հերթին կանգնած են արտահանումների աճի բնագավառում կարևոր հանգուցալուծման առջև: 2012 թ. սեպտեմբերին ճապոնական արտահանվող ապրանքները նվազեցին 10 տոկոսով, ինչը երկրի ամենակտրուկ աճն է վերջին տարիների ընթացքում: Չինաստանի պարագայում վերջինիս երրորդ քառորդի ՀՆԱ-ի աճը կազմեց 7,4 տոկոս, որը ամենացածր մակարդակն է վերջին երեք տարիների ընթացքում: Չինաստանը վտանգված է ներքին գերներդրումային խնդիրներից, վարկային չարաշահումներից և թույլ արտահանման շուկայից, ինչը վերջինիս տնտեսական հեռանկարը մտահոգիչ է դարձնում: Ճապոնիայի հեռանկարը նույնպես մտահոգություն է առաջացնում, քանզի վերջինիս տնտեսությունը երրորդ քառորդում ամենամեծ սահմանափակումները կրեց 2011 թ. երկրաշարժից հետո: Ճապոնական ՀՆԱ-ն սեղմվեց մինչև 3,4 տոկոս՝ ներդրողներին դարձնելով զգուշավոր:

Ապրանքային շուկա

Ընդհանուր առմամբ, այս ժամանակաշրջանի համար ***համաշխարհային ապրանքային շուկաները շարունակում են դանդաղ շարժը***՝ կապված ավելի լայն համաշխարհային տնտեսական թուլացման հետ: Ինչպես նշեց Reuters CRB ապրանքային ինդեքսը, որը հետևում է 19 ապրանքներից բաղկացած զամբյուղին, համընդհանուր ապրանքային արժեքը նվազում է տարեկան 8 տոկոսով և ամսական 4 տոկոսով: ***Ոսկու գները*** անցած շաբաթ փակվեցին ***ինը շաբաթվա նվազագույն մակարդակի վրա***, քանզի ներդրողները որոշեցին չբացել խոշոր դիրքեր, թեպետ ոսկին գրանցեց 7 դոլար աճ ունցիայի դիմաց՝ վաճառվելով 1689 դոլարով: Այդ աճը շարունակվեց մինչև 1736 դոլար 82 ցենտ, ինչը կապված էր նախագահ Օբամայի վերընտրմանը հաջորդած սպեկուլյացիայի հետ: ***Հետագայում նույնպես կայուն աճ է կանխատեսվում***, քանզի ընտրությունները ԱՄՆ-ում ցույց տվեցին, որ ԱՄՆ-ի տոկոսադրույքները կշարունակեն մնալ ցածր, հետևաբար աճի նոր թափ կհաղորդեն ոսկու գներին:

2012 թ. նոյեմբերի 9-ին ***իրանական աղբյուրների հաղորդած տեղեկատվությունը*** ոսկու գների բարձրացման հարցում ***նոր միտում է առաջ բերում, քանզի ըստ որոշ տեղեկությունների՝ Իրանը ոսկի է պահեստավորում*** ՝ կանխելով արտահանումը և վաճառքները: Ոսկու պահեստավորումը նպատակ է հետապնդում կայունացնել Իրանական տնտեսությունը, քանզի արևմտյան պատժամիջոցների ազդեցությունը մեծանում և խստագույն արժույթային

ճգնաժամը շարունակվում է (ըստ ամերիկյան օրենքների՝ ոսկու ցանկացած վաճառքը իրանական կառավարությանը, լինի դա Թուրքիայի կամ ցանկացած այլ պետության կամ քաղաքացու կողմից, ենթակա է պատժամիջոցների) : Ըստ թուրքական աղբյուրների՝ Իրանը ամսական կտրվածքով ձեռք է բերել մոտ 2 միլիարդ դոլարին համարժեք ոսկի՝ սկսած հուլիս ամսից՝ կապված ԱՄՆ-ի բանկային ավելի կոշտ պատժամիջոցների կիրառման և եվրոպական երկրների կողմից իրանական նավթի բոյկոտի հետ: ***Իրանական գնորդները այս գնումները մեծամասամբ կատարում են թուրքական լիրայով,*** և ոսկին հիմնականում ձեռք է բերվում ձուլակտորների տեսքով՝ տեղափոխվելով ճամպրուկների օգնությամբ, այնուհետև օդային ճանապարհով դեպի Դուբայ և այնտեղից Պարսից ծոցով մինչև Իրան: ***Երկրորդ միտումը կապված է հնդկական կառավարության պլանների հետ,*** որը 2011 թ. ամենախոշոր ոսկու գնորդն է: Վերջինս ցանկանում է ավելացնել ոսկու գնման ծավալները այս քառորդում:

Հայաստան՝

Հայաստանյան շուկայի առավել էական կարճաժամկետ զարգացումներից մեկը գալիս է Իրանից: Նոյեմբերի 8-ին իրանական կառավարությունը ***նոր արգելքներ է մտցրել ավելի քան 2000 ապրանքների ներմուծման վրա, որոնք համարվում են «շքեղ ապրանքներ»:*** Ունենալով լուրջ պատժամիջոցների հետ կապ ունեցող արտաքին արժույթի պակաս՝ ***նոր արգելքը վերաբերում է ապրանքների մի մեծ հատվածի, որոնց մեջ մտնում են մեքենաներ և մոտոցիկլեր, ինչպես նաև որոշ 75 առանցքային սպառողական ապրանքներ***, ինչպիսիք են կոսմետոլոգիական ապրանքները, որակյալ ժամերը, տնային տեխնիկան, համակարգիչները, բջջային հեռախոսները, բայց նաև որակյալ սուրճ և շոկոլադ ու զուգարանի թուղթ: Իրանական սպառողների համար ***հայկական շուկան կառաջարկի անհապաղ և համեմատաբար մատչելի այլընտրանք,*** ինչը ավելի մեծ հնարավորություն կպարգևի իրանական գործարարներին կամ հայ/իրանցի միջնորդներին ճամփորդել Հայաստան, գնել սպառողական ապրանքներ և հակաօրինական կերպով վաճառել դրանք մեծացող իրանական սև շուկայում: Այս քայլը ***հետևում է անցյալ ամիս նմանատիպ արգելքի կիրառմանը***, թեպետ այն ժամանակ ***արգելվեց 50 ապրանքների արտահանումը, այդ թվում նաև ալյումին, շաքար և ցորեն:***

Մեկ այլ ***արժանահիշատակ զարգացում, որը կարող է կարևոր երկարաժամկետ ազդեցություն ունենալ Հայաստանի տնտեսության վրա,*** տեղի ունեցավ անցած շաբաթ: ***Իտալական ավիափոխադրող Ալիտալիան կսկսի ուղիղ չվերթներ իրականացնել դեպի Հայաստան՝ Հռոմ-Երևան չվերթով***: Չվերթները տեղի կունենան շաբաթը երկու անգամ՝ սկսած դեկտեմբերի 11-ից: Այս նոր ուղղությունը, որը վերջերս սեփականաշնորհված իտալական ընկերության ավելի ընդարձակ շուկաների ընտելացման ծրագրի մաս է կազմում, կառաջարկի նոր «մրցունակ գներ» առաջին երեք ամիսներին ուղեվորներ գրավելու նպատակով: Այս աննախադեպ առաջխաղացման ծրագիրը կառաջարկի գրավիչ գնային համակարգ: Երևան-Հռոմ տոմսերի գները կսկսվեն 299 եվրոյից կամ համարժեք 380 դոլարից:

Այս ***զարգացումը էական է, քանզի սահմանափակ հայաստանյան քաղաքացիական ավիացիոն հատվածը թուլացեր էր*** անցած ամիս Բրիտանական BMI airline-ի՝ British Airways-ի օժանդակ ընկերության հեռանալու պատճառով, որը փակեց Լոնդոն-Երևան իր տասնամյա չվերթը: Այդ որոշումը պայմանավորված էր փոքր եկամտաբերությամբ ցամաքային ծառայությունների, դարպասների վճարների համար հայաստանյան օդանավակայանի բարձր գներով, ինչպես նաև Երևանում ավիացիոն վառելիքի մենաշնորհով: Հաշվի առնելով այդ իրականությունը՝ լեհական ավիափոխադրող LOT-ը արդեն որոշել է դադարեցնել Վարշավա-Երևան չվերթը գալիք շաբաթ, իսկ Czech Airlines-ը

նույնպես այժմ լրջորեն դիտարկում է Պրահա-Երևան չվերթների դադարեցումը՝ թողնելով միայն Austrian Airlines-ը, Air France-ը և Aeroflot-ը որպես Երևան ժամանող խոշոր ավիափոխադրողներ:

Հայաստանի Զվարթնոց օդանավակայանի կառավարման խնդիրներից բացի, որը գործարկվում է արգենտինական ընկերության կողմից, ***Հայաստանի ազգային ավիափոխադրող Արմավիայի մոտեցող հավանական սնանկությունը*** մեկ այլ մարտահրավեր է երկրի տնտեսության համար, որը անմիջական ազդեցություն կունենա ուղևորությունների և տուրիստական ծառայությունների հատվածի վրա: Արմավիայի համար ամենավերջին խնդիրը առաջ եկավ անցած շաբաթ , երբ պետությանը պատկանող հայկական մի ընկերություն, որը տրամադրում է օդերևութաբանական ծառայություններ, սպառնաց դատի տալ Արմավիային վերջինիս 142 միլիոն դրամ (350000 դոլար) պարտքի պատճառով: Արմավիան նաև «ճակատամարտում է» Զվարթնոց օդանավակայանի տնօրինության հետ ***Արմավիայի 3 միլիոն դոլարանոց պարտքի շուրջ*** ըստ անցած ամսվա տվյալների:

TeleTRADE
Պրոֆեսիոնալ մոտեցում թրեյդինգին

TeleTRADE-ը FOREX շուկայի հիմնական խաղացողներից է և տիրապետում է աշխարհում ամենալայն ներկայացուցչական ցանցին՝ ունենալով 150 գրասենյակ աշխարհի 20 երկրներում: Հիմնադրված լինելով 1994 թ.՝ TeleTRADE-ը ճանաչված առաջամարտիկ է խորհրդատվական և միջազգային ֆինանսական շուկաներում ծառայությունների մատուցման բնագավառում: